ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ԳՀԱՊՁԲ-17/4-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **18 -ը հուլիսի 2018թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԷՅ ԴԻ ԷՅ ԹԵՔ» ՍՊԸ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ռ. Ղազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 22.12.2017թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-17/4-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով անշարժ գույքի գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) հանձնել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված անշարժ գույք (այսուհետև՝ Օբյեկտ)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Օբյեկտը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 11,475,000 **(տասնմեկ միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Սույն Համաձայնագրով Գնորդի կողմից նախատեսվում է կանխավճար՝ Համաձայնագրի գնի 100%-ի չափով, որը Պատվիրատուն փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ Համաձայնագիրը կնքելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 25.12.2018թ: Կանխավճարի մարումը կիրականացվի հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, անշարժ գույքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԶՍՊ վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Էյ Դի Էյ Թեք» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011035020	Հ/Հ 1510009125850100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00870486
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-17/4-2 պայմանագրին կից
N 2 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը /դրամ/	Ընդհանուր գումար /դրամ/
1	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	հատ	1	11,475,000	11,475,000

Անշարժ գույքի հանձնումը պետք է իրականացվի Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց մինչ 2019թ. դեկտեմբերի 20-ը:

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-17/4-2 պայմանագրին կից
N 2 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ., այդ թվում՝					
			հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ,քան 25.12.18թ
1	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	44211130/539/10/2	11,475,000	11,475,000	11,475,000	11,475,000	11,475,000	11,475,000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական տեսքով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ԷՅ ԴԻ ԷՅ ԹԵՔ» ՍՊԸ
տնօրեն

Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

ՀՀ պաշտպանության նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար կառուցվելիք անշարժ գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի դեկտեմբերի 22-ին կնքված N ԳՀԱՊՁԲ-17/4-2 պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2018 թվականի հուլիսի 18-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Համապատասխան ֆինանսկան միջոցների նախատեսումը:

Փոփոխության նկարագրություն՝ Նկատի ունենալով, որ հատկացվել է համապատասխան ֆինանսական միջոցներ՝ կնքվել է համաձայնագիր նախատեսված ֆինանսական միջոցների չափով անշարժ գույքի ձեռքբերման պայմանագիրն ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 11,475,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:ն Համաձայնագրով Գնորդի կողմից նախատեսվում է կանխավճար՝ Համաձայնագրի գնի 100%-ի չափով, որը Պատվիրատուն փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ Համաձայնագիրը կնքելուց հետո 5 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 25.12.2018թ : Կանխավճարի մարումը կիրականացվի հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա: Համաձայնագրով նախատեսված գնման և վճարման ժամանակացույցերը նախատեսվում են N 1 և N 2 Հավելվածների տեսքով:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 8.13 կետը: Ֆինանսական միջոցները նախատեսվել են 2018թ. պետական բյուջեյով նախատեսված միջոցների հաշվին (07.05.2018թ. N 27-ՊՆ ծանուցագիր):

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության ԱՇԾ ԳՓՁ բաժնի պետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ 010-66-24-94:
Էլ. փոստ՝ ***r.mardoyan@mil.am:***

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-17/4-2 պայմանագրին կից
N 2 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը /դրամ/	Ընդհանուր գումար /դրամ/
1	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	հատ	1	11,475,000	11,475,000

Անշարժ գույքի հանձնումը պետք է իրականացվի Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց մինչ 2019թ. դեկտեմբերի 20-ը:

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-17/4-2 պայմանագրին կից
N 2 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ., այդ թվում՝					
			հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ,քան 25.12.18թ
1	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	44211130/539/10/2	11,475,000	11,475,000	11,475,000	11,475,000	11,475,000	11,475,000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական տեսքով: